



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

--- 2025 թվականի N---Ա

**«ՓԱՌԻԵՐ ԷՆԵՐՋԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի հոկտեմբերի 9-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման լիցենզիա ունեցող անձի ֆինանսական հաշվետվությունների ձևերը սահմանելու մասին» N375-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն՝ էլեկտրական էներգիայի մատակարարման լիցենզիա ունեցող անձի կողմից ֆինանսական հաշվետվությունների (այսուհետ՝ Հաշվետվություններ) ներկայացման ժամկետը մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ն է, սակայն «ՓԱՌԻԵՐ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2024 թվականի արդյունքներով Հաշվետվությունները Հանձնաժողով է ներկայացրել 2025 թվականի ապրիլի 23-ին,

բ) Հանձնաժողովը Որոշմամբ սահմանված պահանջի չկատարման փաստի ուսումնասիրման նպատակով 2025 թվականի մայիսի 6-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2025 թվականի մայիսի 6-ի NԿՍ/34.4-Մ2-1/2010-2025 գրությամբ,

գ) Ընկերությունը վարույթում քննարկվող հարցի վերաբերյալ 2025 թվականի մայիսի 13-ի NՎԹ-91 գրությամբ հայտնել է, որ Որոշմամբ սահմանված՝ Հաշվետվությունների ներկայացման ժամկետի խախտման փաստը պայմանավորված է եղել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (<https://file-online.taxservice.am/>) խաթարված լինելու հանգամանքով: Ընկերությունը նշել է, որ

Հաշվետվությունների կազմման համար անհրաժեշտ են եղել տեղեկություններ, որոնք հասանելի են վերոհիշյալ էլեկտրոնային համակարգով տարեկան շահութահարկի հաշվարկի ներկայացման արդյունքում,

դ) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Որոշմամբ սահմանված՝ Հաշվետվությունների ներկայացման ժամկետը: Վարչական վարույթի շրջանակում Ընկերության կողմից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի խափանված լինելու մասին դիտարկման առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ Հանձնաժողով ներկայացվող Հաշվետվությունները ենթակա են լրացման «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 12-րդ հոդվածով սահմանված՝ սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որոնց պարտադիր վավերապայմանները սահմանված են նույն հոդվածի 2-րդ մասով, իսկ Ընկերության կողմից վկայակոչված՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով տարեկան շահութահարկի հաշվարկի ներկայացման ընթացակարգը և շահութահարկի հաշվարկում տեղ գտած ցուցանիշները վերաբերում են հարկային հարաբերություններին: Բացի այդ, Հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 26-ի N103-Ն որոշման N1 հավելվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգի 8-րդ կետի համաձայն՝ Հաշվետվությունների կազմման համար անհրաժեշտ սկզբնական հաշվառման փաստաթղթերում անորոշությունների, անճշտությունների և այլ վիճահարույց տվյալների առկայության, կամ տարբեր պատճառներով այդ փաստաթղթերի վավերացված չլինելու դեպքում լիցենզավորված անձը պարտավոր է սկզբնական հաշվառման առկա փաստաթղթերի կամ իր կողմից առավել արժանահավատ համարվող ցուցանիշների հիման վրա լրացնել և Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում Հաշվետվությունները ներկայացնել Հանձնաժողով, իսկ հետագայում նոր հիմնավոր փաստերի առկայության կամ սկզբնական հաշվառման փաստաթղթերում փոփոխությունների կատարման դեպքում Հաշվետվություններում կատարել փոփոխություններ և Հանձնաժողով ներկայացնել ճշգրտված Հաշվետվություններ: Հետևաբար, Ընկերության կողմից ներկայացված

փաստարկներով չի հիմնավորվում Որոշմամբ սահմանված ժամկետի խախտումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը,

ե) Ընկերությունը 2023 թվականի արդյունքներով Հաշվետվությունները ևս Հանձնաժողով է ներկայացրել Որոշմամբ սահմանված ժամկետի խախտմամբ՝ 2024 թվականի ապրիլի 23-ին: Սակայն, քանի որ տվյալ դեպքում առկա չի եղել տվյալ խախտման կրկնակիություն, Հանձնաժողովը նպատակահարմար է գտել կիրառել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով իրեն վերապահված իրավասությունը և չհարուցել վարչական վարույթ, ինչի մասին Ընկերությունն իրազեկվել է Հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 8-ի ՈԳԲ/34.4-Մ2-1/1938-2024 գրությամբ և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերն ու «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
----- 2025թ.